ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Երաժշտություն

(առարկա)

Թեմա՝ «Երաժշտություն» առարկայի դասավանդման նպատակներ և խնդիրները

Կազմեց՝ Վարսենիկ Բաղդասարյանը

(անուն ազգանուն)

Թիվ 1 միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Միլենա Մինասյան

Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ.1 ՝ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

1.1 Սովորողների գեղագիտական դաստիարակությունը դպրոցում «երաժշտություն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում..... . . 5

1.2 Դասավանդման մեր փորձից..... . 13

Եզրակացություններ..... 17

Օգտագործված գրականության ցանկ.....18

Հավելված.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արվեստը պիտի արտահայտե արվեստագետի հոգին, իրերի հոգին, մարդու հոգին: Նա պիտի մեկնաբանե պատկերներով՝ մեր ներաշխարհը: Նա պիտի թարգմանե բնությունը:Նա պետք է տա ո՞չ թե իրականությունը, այլ նրա զգայությունը, զգացումը և պատրանքը»:

Ավ. Իսահակյան

Մշակույթը ցանկացած հասարակության ոգին է և առաջնակարգ դեր ունի նրա կյանքում: Հետևաբար՝ պետության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի կրթական համակարգում ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն սովորողների մշակութային հայացքների ու կարողունակության ձևավորումն ու զարգացումը: Մշակույթը հոգևոր և նյութական արժեքների աբողջությունն է, որը ստեղծվել և շարունակում է ստեղծվել մարդկության կողմից: Այն ներառում է մարդկանց ինքնաարատահայտման և ինքնագիտակցության բոլոր ձևերը և տեսակները:

Անձի համակողմանի զարգացման խնդիրները հատկապես արդիական են այսօր՝ հաշվի առնելով, որ կրթական համակարգը բարեփոխումների շարունակական գործընթացի մեջ է: Դպրոցի գերնպատակն այս փուլում նաև սովորողների անհատականության, արժեհամակարգի, ստեղծագործականության, գեղագիտական հայացքների ձևավորումն է: Ուսումնական գործընթացում ստեղծագործ, գեղագիտական բարձր ճաշակ ունեցող անհատի զարգացումն իրենից ենթադրում է սովորողների մոտ ուսումնական առարկաների նկատմամբ հետաքրքրության խթանում, համակողմանի զարգացման, ինքնավստահության մակարդակի բարձրացում, ինքնուրույն մտածողության ձևավորում: Ստեղծագործականությունը աշակերտին թույլ է տալիս երևակայել, ստեղծագործել, զարմանալ, լուծումներ գտնել ոչ ստանդարտ իրավիճակներում և տեսնել ու հասկանալ կյանքի գեղեցիկ կողմերը: Այս նպատակներին հասնելու համար մանկավարժական գիտության և պրակտիկայի մեջ ներդրվում են դասի՝ նոր, ոչ ստանդարտ ձևեր և մեթոդներ: Շրջանառության մեջ դրվում են ոչ ավանդական

դասատիպերը, ուսուցման խնդրահարույց մեթոդները, կոլեկտիվ ստեղծագործական հնարները, հարցադրումների և խաղային տեխնոլոգիաների տեսակներ, որոք նպատակ ունեն խթանելու սովորողների առաջադիմությունը, կարողունակությունների ձեռքբերումն ու զարգացումը, ինչպես նաև ստեղծագործական գործունեության զարգացումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հաշվի առնելով կրթության չափորոշիչներում հստակ սահմանված պահանջն առ այն, որ ուսուցիչը պետք է դասապրոցեսի ընթացքում զարգացնի սովորողների մշակութային կարողունակությունը՝ աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորել ենք «երաժշտություն» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում մշակութային կարողության զարգացման անհրաժեշտության կարևորությամբ:

Հետազոտության նպատակը:

- Ուսումնասիրել երաժշտության ներգործությունը սովորողների գեղագիտական դաստիարակության վրա:
- Դիտարկել երաժշտության դասին սովորողների մշակութային կարողունակության զարգացման հնարավորությունները:

Հետազոտության խնդիրը: Ցույց տալ «երաժշտություն» ուսումնական առարկայի ազդեցությունը սովորողների համակողմանի զարգացման, գեղագիտական ճաշակի ձևավորման վրա:

ԳԼՈՒԽ 1 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

1.1 Սովորողների գեղագիտական դաստիարակությունը դպրոցում «երաժշտություն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում

Դաստիարակությունը հասարակական կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է, որն ուսուցման գործընթացի անբաժանելի մասն է կազմում: Այն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը և վերջինիս նախապատրաստելուն հասարակական, մշակութային կյանքին: Դաստարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեության ընթացքում, որի շրջանակներում նշված երկու սուբյեկտները սերտորեն համագործակցում են՝ հետապնդելով միևնույն նպատակները: Դաստիարակության տեսակ է գեղագիտական դաստիարակությունը, որը սովորողին տալիս է գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակություններ ձևավորելու հնարավարություն: Այտեղ իր առանցքային դերակատարումն ունի դպրոցը: Խոսելով գեղագիտական դաստիարակության մասին՝ հարց է ծագում. կյանքի ո՞ր ոլորտում և ի՞նչ նպատակների հասնելու համար է սովորողին այն անհրաժեշտ: Բարեբախտաբար, մարդկությունն իր առջև միայն լուծելի խնդիրներ է դնում: Դեռ մարդկության ձևավորման ակունքներում մարդը սովորեց իր համար հագուստներ, զենքեր, կենցաղային իրեր պատրաստել: Որոշ ժամանակ անց ցանկացավ, որ հագուստը լինի գեղեցիկ, կուժն ու բաժակը՝ նկարազարդված: Ուստի սկսեց գեղագիտորեն մոտենալ անհրաժեշտություններին ու դրանց մեջ դրեց ստեղծագործական միտք, գեղագիտություն: Ներթափանցելով ստեղծագործականության ու գեղագիտության մեջ՝ մարդը հասկացավ, որ այն մի ամբողջական համակարգ է, որն ունակ է զարգացնել գեղագիտական ճաշակ, քննադատական, համեմատական, ճանաչողական կարողություններ, պատասխանատվության զգացում, նորարարություն:

Այդպես է նաև այսօր: 21-րդ դարի աշակերտը ավելի ճկուն է, հետաքրքրասեր, նորարար, ուստի գեղագիտական ունակություններն ու ճաշակը մեծ դեր են խաղում նրա՝ հաջողություններ ունենալու, կյանքում առաջ գնալու հարցերում: Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն

հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, նրա մեջ ամրապնդում է գեղագիտական զգացմունքները, ճաշակ, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը: Դաստիարակության այս տեսակը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները: Պարզվում է, որ բնությունը մեծահոգաբար զարգանալու հնարավորություններով է օժտել գրեթե բոլոր երեխաներին: Եվ յուրաքանչյուր երեխա կարող է գրանցել մեծ հաղթանակներ թե' ուսումնառության մեջ, թե' կյանքի այլ ոլորտներում՝ ստեղծագործական գործունեության միջոցով: Այդուհանդերձ, նշենք, որ ստեղծագործականությունը ինքն իրենով չի զարգանում, դրա վրա հարկավոր է աշխատել, զարգացնել, ստեղծագործական հմտությունների կիրառման համար ստեղծել նպաստավոր պայմաններ: Այդ գործին է նվիրված ուսուցիչը, ով նույնպես ոգևորվում է իր սովորողների ստեղծագործական հաջողություններով: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ[1]»:

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնային պարտականությունների թվին կարելի է դասել յուրաքանչյուր աշակերտի մեջ ճանաչել, բացահայտել մարդկային ներուժը, ընկալելու, հիշելու, երևակայելու կարողությունները, ինչպես նաև հետադարձ կապի օգնությամբ վեր հանել օժտվածության աստիճանը, հնարավոր դժվարությունները ուսումնառության գործընթացում: Այս ամենը շարունակական կերպով իրականացվում է նաև «երաժշտություն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում: Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել: Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 10:

ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ [2]:

Բարենպաստ կրթական միջավայրում առաջադիմող, ուսուցչի հետ համագործակցող սովորողն ունի լայն հնարավորություններ ստեղծագործական կարողություններ ձևավորելու համար: Այսպիսի միջավայրում ուսուցչի և աշակերտի միջև կա երկուստեք փոխհամաձայնություն, իրար օգնելու, խնդիրները լուծելու պատրաստակամություն: Այսպիսով, կարող ենք վստահաբար պնդել, որ սովորողի ստեղծագործականության զարգացման վրա մեծ է ուսուցչի ուղիղ ազդեցությունը: Սակայն այս գործընթացն ավելի է դժվարանում, երբ կրթական ոլորտում նկատվում է այդ գործունեության համար համապատասխան հմտություններ ու կարողություններ ունեցող ուսուցչական կազմի պակաս: Ուստի այս գործընթացի համար անհրաժեշտ մանկավարժական պայմաններ ստեղծել, որպեսզի ուսուցիչն ինքը հնարավորություն ունենա ինքնակրթվելու, զարգանալու, համապատասխան մասնագիտական որակներ ձեռք բերելու: «Ուսուցիչը պարտավոր է. մասնագիտական ընդհանուր եւ հատուկ կրթություն իրականացնելու նպատակով անընդհատ կատարելագործել իր մանկավարժական գիտելիքներն ու հմտությունը[3]»:

Բոլորը գիտեն, որ երաժշտությունը կրթում և դաստիարակում է մարդուն, հղկում է ճաշակ, ինտելեկտ, օգնում է աշխարհայացքի կերտմանը և ձևավորմանը: Երաժշտությամբ դաստիարակելը պետք է սկսել ամենափոքր տարիքից՝ մատուցելով երեխային հասկանալի, հետաքրքիր, բարձրարժեք երաժշտություն: Ըստ ուսումնական ծրագրերի՝ այս դասընթացի շնորհիվ սովորողը պետք է իմանա և կարողանա անել՝

- իմանա հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշները,
- կատարի հայ ազգային (խաղերգեր, հաշվերգեր, խաղիկներ, պարերգեր,
- իմանա հայ դասական կոմպոզիտորների ստեղծագործություններից ընտրված մանկական երգեր,
- իմանա հայ, հոգևոր և համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները:

---

[2] https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ եվ ծրագիր:

[3] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0 ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հետազոտության փորձարարական հատվածն իրականացրել ենք կրտսեր դպրոցում, ուստի անդրադառնանք տարրական դասարաններում առարկայի ուսումնական հիմնական նպատակներին ու խնդիրներին՝

- Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:
- Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ:
- Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, երևակայությունը և ստեղծագործական պատկերացումները: Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը:
- Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, անփոխարինելի նշանակություն ունի դեր երեխայի անհատականության ձևավորման և զարգացման վրա: Առարկայի ուսուցումը հնարավորություն է տալիս սովորողներին ճանաչել համաշխարհային և հայկական երաժշտության բնագավառի մեծերին, նրանց կյանքն ու ստեղծագործությունները, հնարավորություն է ստեղծում ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Առարկան նպաստում է սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը: Մանկավարժության մեջ ցանկացած ուսումնական առարկայի դասավանդման մեջ հաջողելու առումով տեղին է այն հարցադրումը, թե ինչպիսի եղանակներով է հարկավոր պլանավորել ու նախագծել դասի ընթացքը, որ հնարավոր լինի զարգացնել աշակերտի ստեղծագործական մտածողությունը, ինքնատիպությունը, նախաձեռնողականությունն ու ինքնուրույնությունը, որպեսզի վերջինս իր առջև դրված խնդիրների հնարավորություն ունենա տալ ճիշտ, գեղեցիկ ու կառուցողական լուծումներ:

Առաջին ու կարևոր նախապայման այս ընթացքում կհամարենք ժամանակակից մեթոդների, դասի զանազան տիպերի ներդրումը դասին պլանավորման մեջ: Սովորողը պետք է դասին ունենա ակտիվ դերակատարում, դուրս գա պասիվության

դաշտից: Սա հաջողելու գրավականներից ամենակարևորն է: Պակաս կարևոր չէ նաև սովորողին մոտիվացնելն ու առարկայի նկատմամբ հետաքրքրություն ներշնչելը: Այսպիսով, «Երաժշտություն» առարկայի դերը դպրոցականի ստեղծագործականության զարգացման, գեղագիտական հայացքների ձևավորման համար ունի հիմնարար նշանակություն: Այս ուղղությամբ ուսուցչը կարող է տանել տարաբնույթ աշխատանքներ, այդ թվում `

- Սովորողի ստեղծագործական ներուժի բացահայտում:
- Սովորողի ուղղորդում, աշխատանքի կազմակերպման ձևերին ծանոթացում:
- Սովորողին խրախուսում, մոտիվացիա, կատարված աշխատանքի գնահատում:
- Հետադարձ կապի ստեղծում, ինքնանդրադարձի հնարավորություն:
- Մեթոդամանկավարժական մոտեցումների ճիշտ ընտրություն:
- Դասի ժամանակ բարոյահոգեբանական կայուն մթնոլորտի ապահովում, բարեկամական միջավայրի խրախուսում:
- Ստեղծագործական աշխատանքների մեջ աշակերտին անհրաժեշտ միջոցներով օժանդակում:

Անհրաժեշտ է նաև ամեն կերպ խթանել սովորողի ցանկությունը՝ ինքնուրույն նպատակներ ընտրելու, խնդիրները և դրանց լուծումները գտնելու առումով: Մարդը, ով սովոր չէ ինքնուրույն գործել, պատասխանատվություն կրել կայացված որոշման համար, կորցնում է ստեղծագործական գործունեության ունակությունը: Կրկին վերահաստատենք մերայն պնդումը, որ ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում սովորողների ստեղծագործականության զարգացման վրա մեծ է աշակերտակենտրոն դասի նշանակությունը, որը խթանում է աշակերտների համագործակցությունը, ակտիվությունը դասին, բացահայտելու, նախագծելու հետազոտելու կարողությունները: Մեր մանկավարժական փորձին հղում անելով՝ կարող ենք պնդել, որ համագործակցային մեթոդների վրա հիմնված ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները խորքային ընկալվում են սովորողների շրջանում, ինչը չենք կարող ասել դասի ավանդական կառուցվածքի մասին:

Անհատական և խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի

դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա և այլն: Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն (ունիսոն) և երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար[4]:

Եթե սովորողի ունի հնարավորություն իր դասընկերների հետ համատեղ աշխատելու, ստեղծագործելու, ապա աշխատանքի ընթացքը վերջինիս համար դառնում է հրապուրիչ, նա սիրով է մասնակցում դասին, սովորում է, սովորեցնում: Արդյունքում զարգանում է վերջինիս սովորել սովորելու կարողունակությունը, որի շրջանակներում սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները, սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն[5]:

Սովորողների ստեղծագործականության զարգացման հաջորդ գրավականը վերջիններիս ինքնավստահության ձևավորումն է, հավատը ստեղծագործական խնդիրները լուծելու ունակության նկատմամբ, այսինքն՝ ստեղծել հաջողության իրավիճակ: Նրանք, ովքեր չեն հավատում իրենց ուժերին, ունակ չեն հաջողելու, ուստի այստեղ ևս կարևոր է ուսուցչի կառուցողական մոտեցումը: Սովորողի գեղագիտական դաստիարակության զարգացման համար պարտադիր պայման է նաև բարեկիրթ միջավայրը: Գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի և կենցաղի գեղագիտական կողմերի հետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է

---

[4] https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ եվ ծրագիր:

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 ՀՀ կառավարություն որոշում 4 փետրվարի 2021 թվականի n 136-ն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը:

Սովորողների գեղագիտական դաստիարակության վրա իր անգնահատելի նշանակությունն ունի նաև «երաժշտություն» ուսումնական առարկան: Իր յուրահատկության, բովանդակության, ինչպես նաև ուսումնական բոլոր առարկաների հետ փոխադարձ կապ ստեղծելու բացառիկ հնարավորության շնորհիվ, երաժշությունը կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումը, զարգացումը և հարստացումը, ընդհանուր աշխարհայացքի ձևավորումը: Ստացվում է, որ երաժշտության ուսուցիչը դասավանդման ընթացքում պետք է ուսումնական գործունեության տարբեր ձևեր:Սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակի աշխատանքների հիմքը երաժշտության ակտիվ ընկալումն է, երաժշտություն լսելու և նրա մասին մտորելու կարողության զարգացումը:

Դասին սովորողը ձեռք է բորում զգայական, պատկերային մտածողություն, ընկալում է: Երաժշտություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

- երաժշտական ստեղծագործության ունկնդրում և երաժշտության պատմություն,
- երգերի անհատական և խմբային կատարում,
- երաժշտառիթմական և պարային շարժում, անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա (շարժումային և երգային, հանպատրաստից հորինում),
- ուսումնական էքսկուրսիաներ՝ թանգարաններ, համերգասրահներ և այլ մշակութային օջախներ, երաժշտության ունկնդրում և երաժշտության պատմություն[6]:

Ինչպես նշեցինք, երաժշտությունը զարգացնում է դպրոցականների ինտելեկտը, դարձնում նրանց ավելի ներդաշնակ աշխարհի ու բնության հետ, օգնում մեծանալ որպես ստեղծագործ ու սոցիալականացված անձնավորություն: Պարտադիր չէ, որ բոլոր սովորողները դառնան Մոցարտ կամ Շոպեն, այդուհանդերձ գեղեցիկ երգելու, բանիմաց հանդիսատես և ունկնդիր լինելու ունակությունն, անշուշտ, կընդլայնի գեղագիտական և հոգևոր հորիզոնները, կսովորեցնի այլ կերպ նայել շրջապատող աշխարհին, և այդ ընկալումը հավերժ կմնա դպրոցականի մոտ՝ անկախ նրանից, թե ինչ մասնագիտություն է նա ընտրելու իր համար:

---

[6] https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ եվ ծրագիր:

Անհատական և խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա և այլն: Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն (ունիսոն) և երկձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար:

Այսպիսով, փորձեցինք ամբողջացնել աշակերտի գեղագիտականության զարգացմանը նպաստեղ սկզբունքները «Երաժշտություն ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում, որոնք թույլ են տալիս կյանքը նոր ճանաչող անհատին լիարժեք շփման մեջ մտնել երաժշտարվեստի բացառիկ նմուշերի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ հետաքրքրություններ, կարողություններ, հմտություններ ձեռք բերել ու դրանք կիրառել:

1.2 Դասավանդման մեր փորձից

Մեր մանկավարժական գործունեության ընթացքում դասերը հիմնականում պլանավորում եք՝ օգտագործելով ժամանակակից մեթոդներ, ՏՀՏ գործիքներ: Խմբային, համագործակցային մեթոդական հնարների օգնությամբ ապահովվում է սովորողների համաչափ մասնակցությունը դասին, իսկ զննական մեթոդների, ՏՀՏ գործիքների կիրառումը թույլ է տալիս, որ սովորողի համար դասի տեսական ու գործնական հատվածները լինեն առարկայական, շոշափելի ու հետաքրքիր: Բերենք նմանօրինակ դասի մի օրինակ՝ ցույց տալու համար, որ առարկայի չափորոշչային վերջնարդյունքներին անցնցում հսնելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի դասի՝ կառուցողական ու ժամանակակից մեթոդներով հագեցած պլանավորումը

Առարկան՝ *Երաժշտություն*

Դասարանը՝ *4-րդ*

Դասի թեման՝ «Արամ Խաչատրյանի կյանքը և ստեղծագործությունը»

Դասի տիպը՝ անցած նյութն ամրապնդող, ընդհանրացնող դաս

Դասի կահավորումը՝ համակարգիչ, երևակիչ և մեծ էկրան

Դասի նպատակը՝

- Սովորողներին ծանոթացնել կոմպոզիտորին և նրա ստեղծագործական գործունեությանը:
- Սովորողների մոտ ձևավորել Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները ունկնդրելու, տարբերելու, վերլուծելու հմտություններ:
- Ցույց տալ կոմպոզիտորի ստեղծագործությունների նշանակությունը՝ որպես համամարդկային արվեստի նմուշ:
- Սովորողների մեջ դաստիարակել սեր և հետաքրքրություն հայ դասական երաժշտության հանդեպ:
- Ա. Խաչատրյանի ստեղծագործությունների միջոցով սովորողներին հաղորդակից դարձնել համաշխարհային արվեստի նմուշներին:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դասի սկզբում ուսուցիչը դասարանը բաժանում է 2 խմբի՝ հանձնարարելով, որ սովորողները, օգտվելով համացանցային բաց հարթակներից, փոքրածավալ հետազոտական աշխատանք պատրաստեն Ա. Խաչատրյանի կյանքի և ստեղծագործությունների մասին: Ինտերակտիվ այս մոտեցումը հնարավորություն կտա, որ սովորողներն աշխատեն միասին, հետազոտեն, ի մի բերեն իրենց գիտելիքները թեմայի շուրջ: Փոխգործակցության նմանօրինակ միջավայրիապահովումը թույլ կտա, որ թույլ կամ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողները նույնպես ներգրավվեն աշխատանքային գործունեության մեջ:

Աշխատանքի ավարտին խմբից ընտրված զեկուցողները կներկայացնեն իրենց հետազոտական աշխատանքները: Հաջորդիվ խմբային քննարկումների և ուղղորդող հարցադրումների օգնությամբ կամրապնդվի սովորողների տեսական գիտելիքները:

Հետազոտական աշխատանքի օրինակ՝

Արամ Խաչատրյանը 20-րդ դարի երաժշտական արվեստի խոշորագույն ներկայացուցիչներից է, հայ նոր կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը: Նա ծնվել է Քոջորիում (Թիֆլիսի մոտակայքում) 1903 թվականի հունիսի 6-ին գիրք կազմող Եղիա Խաչատրյանի ընտանիքում: 1913 թվականին նա ընդունվում է Թիֆլիսի «Կոմերցիայի դպրոցը», բայց նախընտրում է երաժշտությունը: Որոշ ժամանակ ինքնուրույն սովորելով նվագել փողային գործիքներով, նա ընդունվում է մի փողային նվագախումբ: 1915 թվականին երիտասարդ Արամ Խաչատրյանի ահաբեկված ընտանիքը, թողնելով իր ամբողջ ունեցվածքը, գաղթում է Եկատերինոգրադ (Կրասնոդար)՝ Խաչատրյանի մեծ եղբոր մոտ: Բարեբախտաբար, թուրքական զորքերը չեն ներխուժում Թիֆլիս, և Խաչատրյանի ընտանիքը վերադառնում է տուն:

1921 թվականին Արամ Խաչատրյանի եղբայր Սուրենը տանում է Արամին Մոսկվա, որտեղ Արամը ընդունվում է Գնեսինների անվան երաժշտական ուսումնարանը: Այդ ժամանակ Արամը նույնիսկ նոտաները չգիտեր: Շատ շուտով նա բացահայտում է իր կոմպոզիտորական տաղանդը, և 1925 թվականին Գնեսինը առաջարկում է Արամին կոմպոզիտորական վարպետության դասերի հաճախել: 1929 թվականին Արամը ընդունվում է Մոսկվայի Կոնսերվատորիան, որտեղ նա ուսանում է հայտնի ռուս կոմպոզիտոր և ուսուցիչ Մյասկովսկու մոտ: Արամը ավարտում է կոնսերվատորիան փայլուն գնահատականներով և իր առաջին խոշոր աշխատանքը՝ «Առաջին սիմֆոնիան»: Այս ժամանակահատվածում նա գրում է նաև երաժշտություն թատրոնի համար, մեծ առումով «Վալենսիական այրի» շարքը և «Դիմակահանդեսը», և իր ավարտական տարիների ընթացքում՝ «Դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար» կոնցերտը: 1939 թվականին Խաչատրյանը գրում է իր առաջին բալետը, որն ի սկզբանե կոչում է «Ուրախություն», հետագայում այն վերանայվում և վերանվանվում է «Գայանե»: 1936-1947 թվականները ամենաբերքառատն էին Խաչատրյանի կյանքում: Նա գրում է երաժշտություն դրամատիկ ներկայացումների և ֆիլմերի համար, երգեր, եկեղեցական երաժշտություն և սիրված «Ջութակի կոնցերտը»: 1943 թվականին գրում է «Թավջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար» կոնցերտը, 1946 թվականին՝ «Երկրորդ սիմֆոնիան», 1947 թվականին՝ «Երրորդ սիմֆոնիան» և իր «Պոետիկ սիմֆոնիան»: 1940-ականներին նա շրջում է ամբողջ Սովետական Միությունը՝ Լենինգրադ (Սանկտ Պետերբուրգ), Կիև, Երևան, Թբիլիսի, Սոչի, Խարկով: 1950 թվականին նա մեկնում է Հռոմ, որը դառնում է նրա համաշխարհային շրջագայության առաջին քաղաքը: Առաջիկա տարիներին շրջագայում է 42 երկիր՝ բոլոր մայրցամաքներում: Իր շրջագայությունների ընթացքում նա հանդիպում է բազմաթիվ հանրահայտ մշակույթի գործիչների՝ Սիբելիուս, Հեմինգուեյ, Չապլին, Դալի: 50-ականներին Խաչատրյանը սկսում է իր ուսուցչական գործունեությունը Գնեսինի երաժշտանոցում և Մոսկվայի կոնսերվատորիայում:

«Խաչատրյանը երևան բերեց էներգիայով, խառնվածքով, հզորությամբ, ռիթմերի բազմազանությամբ, գույների առատությամբ լի նոր հնչյուններ, որոնք բնորոշ էին իր տաղանդին: Երաժշտության մեջ նա պահպանել է հարավի ամբողջ ջերմությունը: Խաչատրյանի գործերը զարմանալիորեն բալետային են և շուտ են մերվում պարին: Դրանք կայծակնային արագությամբ նորանոր պլաստիկ շարժումներ ու կերպարներ են ստեղծում, հուշում ու ներշնչում: Նման ձիրք քչերն ունեն, ոչ բոլորն են կարողանում այսպես կոչված պլաստիկ երաժշտություն ստեղծել»:

Հաջորդիվ սովորողները կունկնդրեն Ունկնդրել Ա. Խաչատրյանի «Ձութակի կոնցերտը» /https://youtu.be/pGbYKtmZtbI/, որից հետո կկիսվեն իրենց կարծիքներով՝ բանավոր պատասխանելով հետևյալ հարցերին՝

- **Ի նչ զգացի**
- **Ինչ գիտեի**
- **Ինչ իմացա**

Այսպիսով, սովորողները համագործակցեցին միմյանց հետ, սովորեցին կոլեկտիվ աշխատանքին, իսկ ահա ստեղծագործության ունկնդրումն ու հաջորդիվ իրականացրած քննարկումը էապես օգնեց, որ վերջիններիս մոտ զարգանա գեղագիտական ճաշակը, հետաքրքրությունը դասական երաժշտության նկատմամբ: Դասի ավարտին սովորողներին տրվեց հայտորոշիչ թեստային աշխաանք:

1. **Ո՞վ է Ա. Խաչատրյանը, ինչ ավանդ ունի նա հայ դասական երաժշտարվեստի մեջ:**
2. **Թվե՛ք կոմպոզիտորի՝ ձեզ հայտնի ստեղծագործությունները:**
3. **Որտե՞ղ է ապրել և ստեղծագործել հայտնի կոմպոզիտորը:**
4. **Որտե՞ղ է գտնվում նրա արձանը:**
5. **Որտե՞ղ է թաղված Ա. Խաչատրյանը:**

Հայտորոշիչ թեստային առաջադրանքից պարզ դարձավ, որ սովորողների հիմնական մասը առանց դժվարության պատասխանեց հարցերին, ավելին՝ պատասխանները բովանդակային էին և պարունակում էին նաև կողմնակի տեղեկություններ: Այսպիսով, վստահաբար կարող ենք պնդել, որ ավանդական դասատիպերից դուրս սովորողներն ավեի են մոտիվացվում և դասավանդման նոր մոտեցումները հետաքրքրություն են առաջացնում նրանց մոտ առարկայի նկատմամբ:

Գնահատում՝ սովորողներն իրականացրին փոխադարձ գնահատում:

Տնային հաձնարարություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, եթե ընդհանրացնենք մեր ուսումնասիրության արդյունքները, կարող ենք կատարել հետևյալ արձանագրումները՝

- Աշակերտների կրթության, դաստիարակության լիարժեքության համար, պարտադիր պայման է վերջիններիս ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումը հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսումնական ծրագրերով նախատեսված առարկաների, ինչպես նաև արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների, էքսկուրսիաների շրջանակներում:
- Երաժշտության դասավանդման ընթացքում, կիրառելով ժամանակակից մեթոդներ և ոչ ստանդարտ դասատիպեր, ուսուցիչը կարող է միջավայր ստեղծել, որպեսզի զարգանա սովորողի ստեղծագործականությունը, գեղագիտական ճաշակը և ձևավորվի մշակութային կարողունակությունը:
- Ուսուցչի մասնագիտական որակները, նորարարական գաղափարների ներդրումը դասին մեծապես կօգնի սովորողին նույնպես հանդես գալ որպես նորարար, նախաձեռնող ու ստեղծագործ:
- Ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդները, ակտիվ ու աշակերտակենտրոն դասերը ուղիղ ազդեցություն կարող են ունենալ սովորողի ստեղծագործականության, գեղագիտական պատկերացումների զարգացման վրա:

Կարծում ենք՝ սույն ուսումնասիրությունը կունենա իր դրական ազդեցությունը մեր մանկավարժական հետագա գործունեության վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345
   «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf
   «Երաժշտություն» առարկայի չափորոշիչ եվ ծրագիր:
3. http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0
   ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին:
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
   ՀՀ կառավարություն ո ր ո շ ու մ 4 փետրվարի 2021 թվականի ո 136-ն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի ո 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- https://youtu.be/jSQei9nTYV8 Aram Xachatryan - Masquerade
- https://youtu.be/pGbYKtmZtbI Դավիթ Օիստրախ - Արամ Խաչատրյան Ձութակի կոնցերտ 1 մաս
- https://youtu.be/qiff35qnkv8 Դավիթ Օիստրախ - Արամ Խաչատրյան Ձութակի կոնցերտ 2 մաս